ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՌԵՎՏՐԻ ԽԹԱՆՄԱՆ ԵՎ ՈՐԱԿԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ» ԾՐԱԳԻՐ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՎԱՐԿ No. 8390-ԱՄ

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

ՓԱԹԵԹԻ ՀԱՄԱՐԸ (ՀԱՄԱՁԱՅՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ)՝ TPQI-C-3.3.2

Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ/IBRD) կողմից՝ «Առևտրի խթանման և որակի ենթակառուցվածքի ծրագրի» համար (հետայսու՝ Ծրագիր) և նպատակ ունի ծրագրային միջոցների մի մասն օգտագործել խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման համար:

Ծրագրի նպատակն է ուժեղացնել կառավարության կարողությունները՝ ընկերություններին արտահանման խթանման, ներդրումների ներգրավման և որակի կառավարման ծառայությունների մատուցման ոլորտում:

Սույն հանձնարարականի նպատակն է աջակցել Ստանդարտների ազգային ինստիտուտի (ՍԱԻ)՝ կարողությունների զարգացմանը և արդյունավետության բարձրացմանն ուղղված ջանքերին:

Հանձնարարականի առանձնահատուկ նպատակն է կառուցել ՍԱԻ-ի համար ժամանակակից ՏՏ ենթակառուցվածք, ներառյալ հետևյալը կետերը՝

1. Ժամանակակից ՏՏ համակարգի մշակում ստանդարտացման բնագավառում ՍԱԻ-ի գործունեությունը բարելավելու նպատակով՝ ՀՀ Ստանդարտների ազգային ֆոնդի հիման վրա ժամանակակից էլեկտրոնային գրադարանի ներդրման միջոցով,
2. Համաշխարհային բանկի կողմից ընդունելի ձևաչափով տեխնիկական բնութագրերի պատրաստում՝ ՍԱԻ-ի կարիքների և մշակված համակարգի շահագործման համար անհրաժեշտ ՏՏ սարքավորումների հետագա գնման նպատակով,
3. ՍԱԻ-ի աշխատակազմի հետ սերտ համագործակցությամբ և ՀՀ Էկոնոմիկայի նախարարության համապատասխան իրավասությունների ոլորտների աջակցմամբ, Խորհրդատուն պատասխանատու կլինի ՍԱԻ-ի ՏՏ

մարտավարության զարգացման և գործարկման համար, ինչպես նաև կաջակցի ՏՏ մարտավարության կառավարման իրականացմանն անհրաժեշտ ՍԱԻ-ի աշխատակազմին գիտելիք և փորձառություն ունենալու հարցում՝ տրամադրելով համապատասխան դասընթացներ:

Հանձնարարականի տևողությունը մեկ տարի է:

Ուստի ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունը եւ ՀՀ ֆինանսների նախարարության "Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն" ՊՀ-ն հրավիրում են պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերություններին (Խորհրդատուներ) Ծառայության մատուցման վերաբերյալ արտահայտելու իրենց հետաքրքրությունը:

Հետաքրքրված Խորհրդատուները պետք է տրամադրեն տեղեկություններ, որոնք կհաստատեն, որ նրանք ունեն ծառայություններն իրականացնելու համար պահանջվող որակավորումը և համապատասխան փորձառությունը:

Խորհրդատվական ընկերությունը պետք է համապատասխանի հետևյալ որակավորման պահանջներին և ունենա՝

- Ծրագրային ապահովման մշակման ոլորտում առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ,
- էլեկտրոնային կառավարման առցանց համակարգերի մշակման առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ, միասնական հանրային ռեգիստրների մշակման փորձը կդիտարկվի որպես առավելություն,
- Կազմակերպության ՏՏ ենթակառուցվածքի և ցանցի նախագծման առնվազն 3 ծրագրի իրականացման պորտֆոլիո՝ իրականացված վերջին 3 տարիների ընթացքում,
- Էլեկտրոնային կառավարման համակարգի մշակման առնվազն երեք հաջողված փորձ՝ իրականացված Հայաստանում, ԱՊՀ երկրներում կամ անցումային տնտեսություն ունեցող երկրներում:

Հետաքրքրված խորհրդատուներին խնդրում ենք հատուկ ուշադրություն դարձնել 2011թ. հունվարին հաստատված Համաշխարհային Բանկի «ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» Ուղեցույցների (Խորհրդատուների ուղեցույց) 1.9. պարբերությանը, որտեղ շարադրված է Համաշխարհային Բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուները կարող են միավորվել այլ ընկերությունների հետ համատեղ ձեռնարկությունների տեսքով կամ որպես ենթախորհրդատուներ՝ իրենց որակավորումը բարելավելու համար:

Խորհրդատվական ընկերության ընտրությունը կիրականացվի 2011 թ. հունվարին հաստատված Համաշխարհային Բանկի «ՎԶՄԲ փոխառությունների եւ ՄԶԱ վարկերի և դրամաշնորհների շրջանակներում Համաշխարհային Բանկի Փոխառուների կողմից Խորհրդատուների ընտրություն եւ աշխատանքի ընդունում» Ուղեցույցների շրջանակներում սահմանված Բաժին II-ում ներկայացված «Որակի եւ արժեքի վրա հիմնված ընտրության» մեթոդի ընթացակարգերի համաձայն:

Հետաքրքրված խորհրդատուները հավելյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կարող են դիմել ստորեւ ներկայացված հասցեով տեղական ժամանակով 09:00-ից 18:00 ընկած ժամանակահատվածում:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող խորհրդատվական ընկերությունները կարող են ներկայացնել հետաքրքրվածության հայտեր՝ անհրաժեշտ տեղեկություններով (ընկերության վերաբերյալ համառոտ տեղեկատվություն՝ ընդհանուր աշխատանքային փորձի, այդ թվում վերջին տարիներին նմանատիպ հանձնարարականների իրականացման փորձի) ստորեւ նշված հասցեով (անձամբ կամ փոստով կամ էլ-փոստով) **մինչեւ 2016 թ. մայիսի 6-ը, ժամը 18:00** :

ՀՀ ֆինանսների նախարարության
“Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն” ՊՀ
Գործադիր տնօրեն
Պրն Էդգար Ավետյանին
Հասցե՝ Տիգրան Մեծ 4, 3-րդ հարկ, Երեւան, ՀՀ
Հեռ՝ (374-11) 91 05 81
Էլ-փոստ՝ info@ffpmc.am